# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 148-Ա
ք. Երևան

## «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի դեկտեմբերի 6-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ՕՀԱՆՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 20
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 148-Ա որոշման

| **Հեռուստածրագրի անվանումը** | **Թույլտվության ժամկետի ավարտը** |
|---|---|
| «Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ»<br>«Կարուսել Ինթերնեյշնլ»<br>«Դոմ Կինո»<br>«Բոբյոր»<br>«Մուզիկա Պերվոգո»<br>«О!»<br>«Զագորոդնայա ժիզն»<br>«Կտո եստ կտո» | 31.12.2019թ. |
| «Մատչ! Պլանետա»<br>«Կինոպրեմիերա»<br>«Կինոխիտ»<br>«Մուժսկոյե Կինո»<br>«Նաշե Նովոյե Կինո»<br>«Կինոմիկս» | 31.12.2019թ. |
| «ԿՀԼ ՏՎ»<br>«Ինդիյսկոյե Կինո»<br>«Կինոսերիա»<br>«Կուխնյա ՏՎ»<br>«365 Դնեյ ՏՎ»<br>«Լյա-Մինոր ՏՎ»<br>«ՏՆՏ Մյուզիք» | 31.12.2019թ. |
| «Միր» | անժամկետ |